ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ ընդհանուր (հիմնադիր) ժողովի
23.10.2013թ. թիվ 1 որոշմամբ

Փոփոխված է

Ընկերության արտահերթ ընդհանուր ժողովի 24.02.2014թ. թիվ 1 (2) որոշմամբ
Ընկերության տարեկան ընդհանուր ժողովի 17.04.2014թ. թիվ 2 (3) որոշմամբ
Ընկերության արտահերթ ընդհանուր ժողովի 29.12.2014թ. թիվ 5 (6) որոշմամբ
Ընկերության արտահերթ ընդհանուր ժողովի 12.03.2015թ. թիվ 1 (7) որոշմամբ
Ընկերության տարեկան ընդհանուր ժողովի 21.05.2015թ. թիվ 3 (9) որոշմամբ
Ընկերության արտահերթ ընդհանուր ժողովի 31.10.2016թ. թիվ 4 (16) որոշմամբ
Ընկերության տարեկան ընդհանուր ժողովի 25.05.2017թ. թիվ 2 (17) որոշմամբ
Ընկերության արտահերթ ընդհանուր ժողովի 29.06.2020թ. թիվ 3 (20) որոշմամբ

Ընկերության պետական սեփականություն հանդիսացող 100 տոկոս բաժնետոմսերի փաթեթի կառավարման լիազորությամբ օժտված մարմնի ղեկավար

Տիգրան Խաչատրյան

ստորագրություն

ՆԱԽԱԳԻԾ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում
խորհրդի 27.11.2013թ. թիվ 270 Ա որոշմամբ

Փոփոխությունը գրանցված է

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի
19.03.2014թ. թիվ 1/235 Ա որոշմամբ
ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի
27.05.2014թ. թիվ 1/475 Ա որոշմամբ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

Digitally signed by Martin Galstyan
Date: 2020.08.05 15:26:40 AMT
Reason: Գրանցված է29.07.2020թ.

Մարտին Գալստյան

ստորագրություն

Armen Khachatryan

Digitally signed by Armen Khachatryan
DN: c=AM, st=Yerevan, l=Yerevan, o=Export Insurance Agency of Armenia Insurance CJSC, email=a.khachatryan@eia.am, cn=Armen Khachatryan
Date: 2020.07.24 13:57:43 +04'00'

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

(նոր խմբագրություն)

ԵՐԵՎԱՆ 2020

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետև՝ Ընկերություն) ստեղծվել է համաձայն Հայաստանի Հանրապետության (այսուհետ նաև՝ ՀՀ) օրենսդրության ՀՀ Կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 1129-Ա որոշմամբ: Ընկերության բաժնետոմսերի կառավարումն իրականացվում է ՀՀ Կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 1129-Ա որոշման համաձայն:
1.2 Ընկերությունը համարվում է ստեղծված և ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ՝ ՀՀ Կենտրոնական բանկում գրանցվելու պահից և իրավունք ունի իրականացնել ապահովագրական գործունեություն և օրենսդրությամբ սահմանված գործառնություններ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ապահովագրական գործունեություն իրականացնելու լիցենզիա ստանալու պահից:
1.3 Ընկերությունը կարող է ունենալ իր ֆիրմային անվանմամբ, ապրանքային նշանով և ՀՀ Կառավարության կողմից սահմանված այլ վավերապայմաններով կլոր կնիք, խորհրդանիշ, ձևաթղթեր, դրոշմներ, համարային կնիքներ և համապատասխան կնիքներ Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների համար: Իր գործունեությունն իրականացնելիս Ընկերությունը ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ Կենտրոնական բանկի իրավական ակտերով, ներքին կանոնակարգերով, հրահանգներով, մեթոդական ցուցումներով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:
1.4 Ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար:
1.5 Ընկերության գտնվելու վայրը (փոստային հասցեն) նրա մշտական գործող մարմնի (գլխավոր գրասենյակի) գտնվելու վայրն է: Ընկերության գտնվելու վայրը և փոստային հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Միեր Մկրտչյան 5, Բ մասնաշենք, 9-րդ հարկ, 926-930 սենյակներ:
1.6 Ընկերության լրիվ ֆիրմային անվանումն է՝
հայերեն՝ «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերություն
ռուսերեն՝ «Экспортное страховое агентство Армении» страховое закрытое акционерное общество
անգլերեն՝ «Export Insurance Agency of Armenia» insurance closed joint-stock company
1.7 Ընկերության կրճատ ֆիրմային անվանումն է՝
հայերեն՝ «ՀԱԱԳ» ԱՓԲԸ
ռուսերեն՝ «ЭСАА» СЗАО
անգլերեն՝ «EIAA» ICJSC

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Ընկերության գործունեության հիմնական ուղղությունը օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան լիցենզիաների հիման վրա հետևյալ ապահովագրության դասերով ոչ կյանքի ապահովագրության տեսակի իրականացումն է՝

1) վարկի ապահովագրություն,
2) երաշխիքի տրամադրում,
3) ֆինանսական վնասների ապահովագրություն:

2.2 Ընկերությունը, Ընկերության մասնաճյուղերն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով սույն կանոնադրության 2.1 կետով նախատեսված ապահովագրության դասերի շրջանակներում կարող են իրականացնել «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 79-րդ հոդվածով սահմանված և թույլատրված գործառնություններ և կնքել նույն հոդվածով սահմանված գործարքներ:
2.3 Ընկերությունը կարող է իրականացնել նաև ինվեստիցիոն (ներդրումային) գործունեություն:
2.4 Ընկերության կողմից խոշոր և շահագրգռվածության առկայությամբ գործարքները կնքվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
2.5 Ընկերությունում գործառնություններն իրականացվում են բացառապես անկանխիկ ձևով:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Ընկերությունն առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է: Ընկերության կազմակերպաիրավական ձևը փակ բաժնետիրական ընկերությունն է: Ընկերությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
3.2 Ընկերության կառավարման մարմիններն իրենց գործունեության ընթացքում կարող են առաջնորդվել ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1769-Ա որոշմամբ հավանության արժանացած «Կորպորատիվ կառավարման կանոնագրքով» ամրագրված մոտեցումներով և սկզբունքներով այնքանով, որքանով դրանք չեն հակասում ապահովագրական գործունեությունը կարգավորող օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև սույն կանոնադրությանը:
3.3 Ընկերությունն իրավունք չունի անցկացնել իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն կամ անսահմանափակ թվով անձանց առաջարկել այլ կերպ ձեռք բերելու դրանք:
3.4 Ընկերությունը կարող է լինել այլ Ընկերության (այդ թվում՝ դուստր, կախյալ) ու ընկերակցության հիմնադիր (մասնակից), բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Օտարերկրյա պետություններում դուստր կամ կախյալ ընկերությունների հիմնադրումը կատարվում է դրանց գտնվելու վայրի, երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:
3.5 Ի թիվս սույն կանոնադրությամբ նկարագրված իրավունքների և պարտականությունների Ընկերությունը կարող է ունենալ և կրել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ և պարտականություններ:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԵՎ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1 Ընկերության կանոնադրական կապիտալը պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափն է, որը համալրվում է Հայաստանի Հանրապետության դրամով:
4.2 Ընկերության փաստացի համալրված կանոնադրական կապիտալը հավասար է իր կողմից տեղաբաշխված բոլոր տեսակի բաժնետոմսերի իրացումից ստացված գումարին:
4.3 Ընկերության միակ բաժնետերն է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը:
4.4 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1,500,000,000 (մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ:
4.5 Ընկերության կանոնադրական կապիտալը բաժանված է 150,000 (մեկ հարյուր հիսուն հազար) հատ հասարակ բաժնետոմսի, յուրաքանչյուրը՝ 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:
4.6 Բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, վճարված են նրա կողմից և կառավարվում են ՀՀ Կառավարության և ՀՀ Կառավարության որոշմամբ սահմանված լիազորված մարմինների կողմից:
4.7 Ընկերության բաժնետոմսերի օտարումը երրորդ անձանց կատարվում է ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:
4.8 Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել արտոնյալ բաժնետոմսեր ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:
4.9 Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը և նվազեցումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:
4.10 Ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ կանոնադրական կապիտալի 15 տոկոսից ոչ պակաս չափով: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափից ավելի փոքր մեծություն, ապա հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթից՝ առնվազն հինգ տոկոսի չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից: Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:
4.11 Ընկերությունում կարող են ստեղծվել ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված հիմնադրամներ (պահուստներ):

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1 Ընկերության բաժնետերը/բաժնետերերը (որը սույն կանոնադրության ամբողջ տեքստում ներառում է նաև ՀՀ Կառավարության որոշմամբ սահմանված լիազորված մարմինը, եթե այլ բան չի բխում համապատասխան դրույթից) ունեն ՀՀ օրենսդրությամբ և

այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներ և կրում են նույն ակտերով նախատեսված պարտավորություններ:
5.2 Ընկերության բաժնետերերն ունեն իրենց սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը (դրանց մասը) օտարելու կամ օրենքով չարգելված ձևով այլ անձանց փոխանցելու իրավունք:
5.3 Բաժնետոմսերի փոխանցումը կատարվում է հետևյալ կերպ՝
ա) մյուս բաժնետերերն ունեն այդ բաժնետոմսերը գնելու նախապատվության իրավունք, որի ժամկետը սահմանվում է 30 (երեսուն) օր՝ սկսած բաժնետոմսերի վաճառքի առաջարկման պահից,
բ) Ընկերությունը պարտավոր է բաժնետիրոջ կողմից բաժնետոմսերը վաճառելու առաջարկությունն ստանալու պահից 3 օրվա ընթացքում դրա մասին ծանուցել մնացած բաժնետերերին՝ նշելով նախապատվության իրավունքի իրականացման ժամկետի ավարտը և դրան չպատասխանելու հետևանքները,
գ) եթե բաժնետերերից որևէ մեկը սույն կետում սահմանված ժամկետում չի օգտվում իր նախապատվության իրավունքից, ապա բաժնետոմսերի օտարումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
5.4 Ընկերության վաճառվող բաժնետոմսերի գնման նախապատվության իրավունքը մնացած բաժնետերերի կողմից համարվում է կիրառված, իսկ դրա համար սահմանված ժամկետը պահպանված, եթե Ընկերության ծանուցումն ստացած բաժնետերերը Ընկերությանը գրավոր տեղեկացնում/ծանուցում են նախապատվության իրավունքով վաճառվող բաժնետոմսերի ձեռքբերման մասին:
5.5 Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԾԱԾԿՄԱՆ ԿԱՐԳԸ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

6.1 Ընկերության գործունեության տարեկան արդյունքներով ստացված համախառն եկամտի և իրավական ակտերով թույլատրված նվազեցումների դրական տարբերությունը՝ հարկվող շահույթը, ենթակա է հարկման՝ ՀՀ հարկային օրենսդրության համաձայն:
6.2 Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվություններում արտացոլված շահույթը կարող է բաշխվել Ընկերության բաժնետերերի միջև կամ տեղափոխվել հաջորդ ֆինանսական տարի, եթե սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված պարտադիր պահուստները ստեղծված և ամբողջությամբ համալրված են:
6.3 Արգելվում է շահութաբաժինների վճարումն Ընկերության կանոնադրական կապիտալի հաշվին:
6.4 Ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունելու (հայտարարելու) իր բաժնետերերին միջանկյալ եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան, շահութաբաժինների բաշխման և վճարման մասին բացառությամբ Կանոնադրությամբ և «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի:
6.5 Միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ընկերության

խորհուրդը: Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ խորհրդի առաջարկությամբ: Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից: Եթե ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում: Եթե ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:

6.6 Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ:

6.7 Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն՝

ա) միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում՝ խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ.

բ) տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում՝ Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

6.8 Ընկերության կորուստները կարող են ծածկվել Ընկերությունում սույն կանոնադրության համաձայն ստեղծված հիմնադրամների (այդ թվում պահուստային), ինչպես նաև Ընկերության չբաշխված շահույթի հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

6.9 Հայաստանի Հանրապետությունը օրենքով, ՀՀ կառավարության որոշմամբ կամ այլ իրավական ակտերով նախատեսված լինելու դեպքում երաշխավորում է Ընկերության պարտավորությունները, որոնք ծագում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայով տրամադրվող ապահովագրական ծառայությունների մատուցումից: Երաշխավորությունը տրամադրվում է համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության:

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

7.1 Ընկերության կառավարման մարմիններն են՝

ա) բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ նաև՝ ընդհանուր ժողով).

բ) Ընկերության խորհուրդը (այսուհետ նաև՝ խորհուրդ).

գ) Ընկերության գործադիր մարմինը՝ տնօրինությունը:

7.2 Բացի վերոնշյալ կառավարման մարմիններից, Ընկերությունն ունի նաև գլխավոր հաշվապահ, ներքին աուդիտի ղեկավար ու պատասխանատու ակտուար, բացառությամբ

օրենքով և դրա հիման վրա ընդունված ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում համապատասխան անձի հետ կնքված ապահովագրական գործառույթների պատվիրակման պայմանագրի առկայության դեպքերի: Ընկերության կառավարման մարմինների կազմավորման և գործունեության կարգը, իրավասությունների շրջանակը սահմանվում է համաձայն ՀՀ օրենսդրության և սույն կանոնադրության:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

8.1 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:
8.2 Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը գումարվում է Ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում:
8.3 Ընկերության բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Ընկերության բաժնետերերի տարեկան ժողովից բացի անհետաձգելի հարցերի քննարկման համար գումարվում են արտահերթ ժողովներ:
8.4 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովների տարեկան և արտահերթ նիստերը գումարվում են Ընկերության խորհրդի որոշմամբ: Արտահերթ ժողովի գումարման վերաբերյալ խորհրդի որոշմամբ սահմանվում է արտահերթ ժողովի գումարման ձևը՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով: Խորհուրդը չի կարող իր որոշմամբ փոխել ժողովի գումարման ձևը, եթե սույն կետում նշված արտահերթ ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջը ցուցում է բովանդակում ժողովի գումարման ձևի մասին:
8.5 Արտահերթ ժողովի՝ հեռակա կարգով քվեարկությամբ գումարման մասին խորհրդի որոշմամբ սահմանվում են՝
ա) քվեաթերթիկի ձևն ու բովանդակությունը.
բ) Ընկերության բաժնետերերին՝ քվեաթերթիկները և բաժնետերերին տրամադրվող տեղեկությունները և նյութերը առաքելու տարին, ամիսը, ամսաթիվը.
գ) բաժնետերերի կողմից լրացված քվեաթերթիկներն Ընկերության կողմից ընդունելու վերջին ժամկետի տարին, ամիսը, ամսաթիվը:
8.6 Քվեարկությունը ժողովում իրականացվում է «Ընկերության մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով, բացառությամբ խորհրդի անդամների ընտրության և սույն կանոնադրությամբ և օրենքներով նախատեսված այլ դեպքերի, երբ կիրառվում է գումարային (կումուլյատիվ) քվեարկության սկզբունքը:
8.7 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին համատեղ տիրապետող Ընկերության բաժնետերերը:

8.8 Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նոր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Նոր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում:
8.9 Ընկերության բաժնետերերի ծանուցումը նոր ժողովի գումարման մասին կատարվում է օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:
8.10 Եթե քվորումի բացակայության պատճառով չկայացած ժողովի գումարման ամսաթիվը տեղափոխվում է 20 օրից պակաս ժամկետով, ապա այդ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի նոր ցուցակ չի կազմվում:
8.11 Ընկերության ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝
ա) Ընկերության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը.
բ) Ընկերության վերակազմակերպումը.
գ) Ընկերության լուծարումը.
դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.
ե) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ընդհանուր ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ընդհանուր ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.
զ) խորհրդի ներկայացմամբ Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը.
է) Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.
ը) ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը.
թ) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.
ժ) բաժնետոմսերի համախմբումն ու բաժանումը.
ժա) օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.
ժբ) հաստատված օրակարգի շրջանակում օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ հարցեր:
8.12 Սույն կանոնադրության 8.11 կետում թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Ընկերության խորհրդին, ինչպես նաև Ընկերության գործադիր տնօրենին (տնօրինությանը), նրա տեղակալներին, Ընկերության գլխավոր հաշվապահին (այսուհետ նաև՝ գործադիր մարմնի անդամներ) կամ այլ անձի:
8.13 Ժողովում ձայնի իրավունքից օգտվում են՝
ա) Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը.

բ) Ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում:
8.14 Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե ՀՀ օրենքներով և սույն կանոնադրությամբ ձայների ավելի շատ քանակ սահմանված չէ: Բաժնետերերը խորհրդի անդամների ընտրության, ինչպես նաև ժողովի օրակարգում ընդգրկված հարցերի քվեարկության շուրջ հաղորդակցվում են միմյանց հետ՝ քվեարկությունից առաջ ներկայացնելով իրենց տեսակետները: Բաժնետերերի և խորհրդի միջև հաղորդակցությունն ապահովելու նպատակով բաժնետերերին (նրանց ներկայացուցիչներին) հնարավորություն է ընձեռվում ըստ անհրաժեշտության ներկա գտնվելու խորհրդի նիստերին, ինչպես նաև հանդիպումներ կազմակերպելու խորհրդի անդամների հետ, եթե դա արգելված չէ ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով:
8.15 Սույն Կանոնադրության 8.11-րդ կետի «բ» և «գ» ենթակետերում սահմանված հարցերով պետությանը պատկանող բաժնետոմսերով Ընկերության ընդհանուր ժողովում լիազորված մարմինը կամ վերջինիս կողմից լիազորված անձը (անձինք) մասնակցում են որոշումների ընդունմանը՝ միայն ՀՀ Կառավարության համապատասխան որոշման առկայության դեպքում:
8.16 Եթե Ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր է հանդիսանում միայն մեկ անձ, ապա ժողովի որոշումները կարող են ընդունվել այդ անձի գրավոր որոշմամբ:
8.17 Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակերով նախատեսված անձինք: Ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված հարցերով ըստ անհրաժեշտության օրենքով սահմանված կարգով կարող են հրավիրվել նաև մասնագետներ, փորձագետներ և այլ անձինք:
8.18 Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության բաժնետերերի ցուցակը կազմվում է խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա: Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան ընդհանուր ժողով գումարելու մասին որոշման ընդունումը, և ավելի ուշ, քան ընդհանուր ժողովի գումարումից 45 օր առաջ: Եթե ընդհանուր ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում են ընդհանուր ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ:
8.19 Ընկերությունն իր բաժնետերերի ընդհանուր ժողովի անցկացման մասին Կենտրոնական բանկին ծանուցում է դրա անցկացումից ոչ ուշ, քան 15 օր առաջ:
8.20 Ժողովի գումարման մասին բաժնետերերը ծանուցվում են ժողովի գումարման օրվանից առնվազն 21 օր առաջ գրավոր ծանուցման միջոցով: Ժողովի գումարման մասին բաժնետերերը կարող են ծանուցվել նաև էլեկտրոնային փոստի կամ հեռախոսակապի, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներով: Ժողովի մասին ծանուցման մեջ ներառվում են օրենքով սահմանված տեղեկությունները: Ժողովի մասին ծանուցմանը ըստ անհրաժեշտության կարող է կցվել նաև լիազորված ներկայացուցչի միջոցով ժողովին մասնակցելու համար անհրաժեշտ բաժնետիրոջ լիազորագրի օրինակելի ձևը:

8.21 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովների գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքները իրականացնում է Ընկերության խորհուրդը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում Ընկերության խորհուրդը որոշում է՝

ա) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը և ժամը.

բ) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգը.

գ) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմման տարին, ամիսը, ամսաթիվը.

դ) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը.

ե) Բաժնետերերին Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը.

զ) քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով:

8.22 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել առանց ժողովի գումարման՝ հեռակա կարգով քվեարկությամբ (հարցման միջոցով): Սույն կանոնադրության 8.11 կետի «բ», «գ», «է» ենթակետերով սահմանված հարցերի վերաբերյալ որոշումը չի կարող ընդունվել հեռակա կարգով քվեարկությամբ: Տարեկան ընդհանուր ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով:

8.23 Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել է Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:

8.24 Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին՝ լրացրած քվեաթերթիկները Ընկերության կողմից ընդունումն ավարտելու պահից առնվազն 30 օր առաջ:

8.25 Հեռակա կարգով կատարվող քվեարկության քվեաթերթիկը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

ա) Ընկերության ֆիրմային անվանումը.

բ) քվեարկության դրվող յուրաքանչյուր հարցի ձևակերպումը և նրա քննարկման հերթականությունը.

գ) քվեարկության դրված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկության տարբերակները՝ «կողմ», «դեմ» և «ձեռնպահ»: Գումարային (կումուլյատիվ) քվեարկության անցկացման դեպքում քվեաթերթիկը պետք է նախատեսի քվեարկության կարգի առանձնահատկությունները.

դ) լրացված քվեաթերթիկներն Ընկերության կողմից ընդունելու տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.

ե) ցուցում այն մասին, որ քվեաթերթիկը պետք է ստորագրվի բաժնետիրոջ (ներկայացուցչի) կողմից.

զ) քվեաթերթիկը լրացնելու կարգի պարզաբանումը.

է) օրենքով նախատեսված այլ տեղեկություններ:

Խորհրդի անդամի ընտրության դեպքում քվեաթերթիկը պետք է թեկնածուների անունից բացի նրանց մասին պարունակի նաև անհատականացնող այլ տվյալներ:
8.26 Ընդ որում, ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ ընդհանուր ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:
8.27 Ընկերության բաժնետերը ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով: Բաժնետերն իրավունք ունի ցանկացած ժամանակ փոխել իր լիազոր ներկայացուցչին կամ անձամբ մասնակցել ժողովին: Բաժնետիրոջ ներկայացուցիչը կարող է մասնակցել ժողովում միայն օրենքով սահմանված կարգով տրված լիազորագրի առկայության դեպքում: Բաժնետիրոջ ներկայացուցիչը կարող է մասնակցել ժողովում միայն լիազորագրի առկայության դեպքում: Նույն բաժնետիրոջ կողմից տրված երկու և ավելի լիազորագրերի առկայության դեպքում ուժի մեջ է համարվում վերջին լիազորագիրը: Ընկերության բաժնետեր հանդիսացող իրավաբանական անձանց ղեկավարները ժողովին ներկայանում են առանց լիազորագրի:
8.28 Ընկերության ընդհանուր ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում առնվազն երկու օրինակով օրենքով սահմանված կարգով և ձևով կազմվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրություն, որը ստորագրում են ժողովի նախագահը և քարտուղարը: Ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՎ ՆՐԱ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԸ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9.1 Ընկերության խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:
9.2 Ընկերության խորհուրդը կազմված է 7 անդամներից:
9.3 Խորհրդի անդամներն ընտրվում են Ընկերության տարեկան ընդհանուր ժողովում Ընկերության ներկա բաժնետերերի կողմից, իսկ Ընկերության խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ ընդհանուր ժողովում Ընկերության ներկա բաժնետերերի կողմից՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքների և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով:
9.4 Ընդհանուր ժողովին Ընկերության խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Ընկերության բաժնետերերը, ինչպես նաև խորհուրդը (բացառությամբ առաջին անգամ խորհրդի ձևավորման դեպքի):
9.5 Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվելու խորհրդի կազմում կամ դրանում նշանակելու իրենց ներկայացուցչին:

9.6 Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսին, կարող են միավորվել և Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը համալրելու դեպքում՝ առանց ընդհանուր ժողովի կողմից ընտրության ընդգրկել իրենց ներկայացուցչին խորհրդի կազմում: Սույն կետի առաջին նախադասությամբ նշված ձևով ներկայացուցչի ընդգրկումը խորհրդում հնարավոր է միայն Ընկերության բաժնետերերի խմբի ստեղծման մասին համապատասխան պայմանագրի առկայության և այդ պայմանագրի վերաբերյալ ընդհանուր ժողովին տեղեկացնելու դեպքում: Նշված պայմանագիրը պետք է պարունակի օրենքով սահմանված պայմաններն ու տեղեկությունները:

9.7 Ընկերության կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերն իրավունք ունեն իրենց շահերը ներկայացնող ներկայացուցչին ընդգրկելու Ընկերության խորհրդի կազմում: Սույն կետի կիրառման առումով Ընկերության կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող բաժնետեր է համարվում Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 տոկոսից պակասին տիրապետող այն մասնակիցը, որը չի կնքել սույն կանոնադրության 9.6 կետում նշված պայմանագիրը:

9.8 Ընկերության կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի միասնական ներկայացուցիչը պետք է առաջադրվի նրանց կողմից և կարող է ընդգրկվել խորհրդի կազմում՝ առանց ընդհանուր ժողովի կողմից ընտրության: Ընկերության կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի ներկայացուցչի ընտրությանը մասնակցում են միայն ընդհանուր ժողովի նիստին ներկա փոքր մասնակցություն ունեցող մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները, թեկուզև դրանց թիվը կազմի մեկ: Ընկերության կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների ներկայացուցչի ընտրությանը չեն մասնակցում սույն կանոնադրության 9.6 կետում նշված պայմանագիրը կնքած Ընկերության բաժնետերերը:

9.9 Ընկերության կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի ներկայացուցչի ընտրությունը, առաջադրումն ու Ընկերության խորհրդում նրանց ընդգրկումը կատարվում է սույն կանոնադրության 8-րդ գլխում սահմանված կարգով: Ընդ որում, Ընկերության կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի առաջադրած ներկայացուցչի մասին՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով պահանջվող տեղեկատվությունը խորհրդի կողմից ներկայացվում է ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին՝ ընդհանուր ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները Ընկերության կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ:

9.10 Ընկերության խորհրդի անդամները վարձատրվում են:

9.11 Ընկերության խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանվում է ընդհանուր ժողովի կողմից և չի կարող երեք տարուց պակաս լինել:

9.12 Ընկերության խորհրդի նախագահն ընտրվում է խորհրդի կողմից խորհրդի անդամների կազմից և օգտվում է օրենքով սահմանված իրավասություններից:

9.13 Ընկերության խորհրդի իրավասություններն են՝

ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ Ընկերության հեռանկարային զարգացման և գործարար ծրագրերի հաստատումը.
բ) ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը.
գ) Ընկերության տնօրինության անդամների, պատասխանատու ակտուարի, ակտուարային ստորաբաժանման աշխատակիցների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.
դ) Ընկերությունում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Ընկերության ներքին աուդիտի ղեկավարի և անդամների նշանակումը, ներքին աուդիտի տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի ղեկավարի և անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.
ե) Ընկերության տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը.
զ) Ընկերության կազմակերպական կառուցվածքի և աշխատատեղերի հաստատումը.
է) շահութաբաժինների վճարման վերաբերյալ ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Ընկերության բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Ընկերության բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում՝ Ընկերության տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ.
ը) Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և ընդհանուր ժողովին ներկայացումը.
թ) ընդհանուր ժողովի հաստատմանը Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը.
ժ) Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը.
ժա) Ընկերությունում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումներից բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը.
ժբ) Ընկերության կողմից «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը.
ժգ) Ընկերության տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Ընկերության ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը.
ժդ) խորհրդի անդամների վարձատրության կամ փոխհատուցման չափի սահմանումը.
ժե) Ընկերության պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը.
ժզ) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.
ժէ) Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.
ժը) Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը.

ի) Ընկերության կողմից ծառայությունների մատուցման սակագների հաստատումը.
իա) Ընկերության կողմից նոր ծառայությունների մատուցման վերաբերյալ որոշման ընդունումը.
իբ) կորպորոտիվ քարտուղարի նշանակումը.
իգ) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը.
իդ) դուստր կամ կախյալ ընկերություններին մասնակցությունը.
իե) իրավաբանական անձանց միությունների հիմնադիր հանդես գալը.
իզ) իրավաբանական անձանց միություններին մասնակցությունը.
իէ) ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը, ընդ որում, կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշում ընդունելու դեպքում խորհուրդն անհապաղ տեղեկացնում է բոլոր բաժնետերերին.
իը) օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ որոշումների ընդունումը:
Սույն կետով թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Ընկերության խորհրդի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Ընկերության կառավարման այլ մարմինների կամ այլ անձանց:
9.14 Առնվազն տարին մեկ անգամ Ընկերության խորհուրդն իր նիստում պետք է քննարկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը), ինչպես նաև քննարկի և անհրաժեշտության դեպքում վերանայի Ընկերության գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունը, կարգերն ու ներքին իրավական այլ ակտերը:
9.15 Առնվազն եռամսյակը մեկ խորհուրդը պետք է քննարկի Ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման, տնօրինության և գլխավոր հաշվապահի, պատասխանատու ակտուարի (ակտուարային ստորաբաժանման ղեկավարի) հաշվետվությունները՝ իր սահմանած կարգով և ձևով:
9.16 Ընկերության խորհրդի նիստերը պետք է գումարվեն առնվազն եռամսյակը մեկ անգամ: Ընկերության խորհրդի անդամների ծանուցումը նիստի գումարման մասին իրականացվում է պատվիրված նամակներ ուղարկելու, կամ առձեռն դրանք հանձնելու, կամ էլեկտրոնային փոստային հասցեով, կամ հեռախոսով նրանց ծանուցելու միջոցով:
9.17 Ընկերության խորհրդի նիստի գումարման մասին Ընկերության խորհրդի անդամները ծանուցվում են նիստի գումարման օրվանից առնվազն 5 օր առաջ:
9.18 Նիստի մասին ծանուցումը պետք է պարունակի՝
ա) Ընկերության ֆիրմային անվանումն ու գտնվելու վայրը (գրավոր ծանուցման դեպքում).
բ) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
գ) նիստի օրակարգում ընդգրկված հարցերը.
դ) Ընկերության խորհրդի անդամների ծանոթանալու կարգը նիստում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին:
9.19 Ընկերության խորհրդի նիստերը գումարում է Ընկերության խորհրդի նախագահը՝ իր, խորհրդի անդամի, Ընկերության գործադիր տնօրենի (տնօրինության), ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի, Կենտրոնական բանկի, ինչպես նաև Ընկերության քվեարկող բաժնետոմսերի 5 կամ ավելի տոկոս ունեցող բաժնետիրոջ (բաժնետերերի) գրավոր պահանջով:
9.20 Խորհրդի նիստերը կարող են անցկացվել և դրանում ընդգրկված հարցերի շուրջ որոշումներ ընդունվել նաև այն դեպքում, երբ խորհրդի նիստի բոլոր մասնակիցները

կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:

9.21 Իրական ժամանակի ռեժիմում խորհրդի նիստն անցկացնում է Ընկերության խորհրդի նախագահը կամ նրա տեղակալը (այսուհետ՝ նիստի նախագահող), երբ նիստի անցկացման տեղում ներկա են խորհրդի առնվազն երկու անդամներ: Իրական ժամանակի ռեժիմում խորհրդի նիստը անցկացվում է նիստի անցկացման տեղում տեղադրված հեռախոսի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով (այսուհետ՝ կապի միջոց), որոնցով խորհրդի նիստի անցկացման ժամանակ ապահովվում է խորհրդի նիստի բոլոր մասնակիցների հետ հաղորդակցվելու հնարավորությունը: Խորհրդի նիստի մասնակիցներ են համարվում նիստի նախագահողը, խորհրդի նիստի անցկացման տեղում ներկա գտնվող խորհրդի անդամը (անդամները), խորհրդի նիստի տեղում ներկա չգտնվող և կապի միջոցով խորհրդի նիստի մյուս մասնակիցների հետ հաղորդակցվելու հնարավորություն ունեցող խորհրդի անդամը (անդամներ) և (կամ) Ընկերության գործադիր տնօրենը կամ նրա պարտականությունները իրականացնող անձը, ինչպես նաև խորհրդի նիստին հրավիրված անձինք:

9.22 Խորհրդի նիստերն իրական ժամանակի ռեժիմում անցկացվում են հետևյալ կարգով. Նիստի նախագահողը կապի միջոցով կապ է հաստատում նիստի անցկացման տեղում չգտնվող խորհրդի նիստի մասնակցի հետ, վերջինիս (վերջիններիս) առաջադրելով ներկայացնել նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ իր (իրենց) դիրքորոշումը: Խորհրդի նիստի քարտուղարը, խորհրդի անդամի կամ Ընկերության գործադիր տնօրենի կամ նրա պարտականությունները իրականացնող անձի պահանջով արձանագրում է արտահայտված դիրքորոշումը (դիրքորոշումները), որոնք ֆաքսիմիլային կամ էլեկտրոնային կապի միջոցով ստորագրության է (են) ներկայացվում խորհրդի նիստի անցկացման սենյակում չգտնվող դիրքորոշում հայտնած խորհրդի անդամին (անդամներին): Ֆաքսիմիլային կամ էլեկտրոնային կապի միջոցով ստացված գրավոր դիրքորոշումը (դիրքորոշումները) խորհրդի անդամը (անդամները) ստորագրում և ֆաքսիմիլային կապի միջոցով հետ է (են) ուղարկում խորհրդի նիստի քարտուղարին:

9.23 Ընկերության խորհրդի նիստերը կարող են գումարվել հեռակա կարգով՝ սույն կանոնադրությամբ սահմանված հեռակա կարգով նիստերի գումարման և անցկացման կարգի համաձայն:

9.24 Խորհրդի նիստերը հեռակա կարգով գումարումն ու անցկացումը կատարվում է քվեաթերթիկների միջոցով: Հեռակա կարգով խորհրդի նիստ գումարելու և անցկացնելու դեպքում՝

ա) խորհրդի նիստերի քարտուղարը խորհրդի անդամներին էլեկտրոնային կամ ֆաքսիմիլ վերարտադրության միջոցով ուղարկում է խորհրդի օրակարգը, քվեաթերթիկները՝ համապատասխան հարցով, քվեարկման տարբերակներով, տվյալ հարցի վերաբերյալ Ընկերության գործադիր տնօրենի (տնօրինության) գրավոր դիրքորոշումը.

բ) խորհրդի անդամները, ստանալով ուղարկված փաստաթղթերը և ծանոթանալով խորհրդի օրակարգին, 5 օրվա ընթացքում (եթե ավելի երկար ժամկետ նախատեսված չէ տվալ քվեաթերթիկով) քվեաթերթիկների միջոցով քվեարկում են դրանում նշված հարցի շուրջ ու ֆաքսիմիլ վերարտադրության կապի միջոցով այն ուղարկում են Ընկերության խորհրդի նիստի քարտուղարին, խորհրդի նիստի քարտուղարը ամփոփում է խորհրդի

անդամների կողմից կատարված քվեարկության արդյունքները (հաշվառում է ձայները) և դրանց հիման վրա կազմում է խորհրդի նիստի հեռակա կարգով անցկացման արձանագրություն.
գ) հեռակա կարգով անցկացված Խորհրդի նիստի կազմված արձանագրությունը քվեաթերթիկների հետ միասին ֆաքսիմիլ վերարտադրության կապի միջոցով ուղարկում է խորհրդի անդամներին՝ ստորագրության.
դ) հեռակա կարգով անցկացված Խորհրդի նիստի ստորագրված արձանագրության հիման վրա խորհրդի նիստի քարտուղարը կազմում է խորհրդի համապատասխան որոշման նախագիծ և այն ֆաքսիմիլ վերարտադրության կապի միջոցով ուղարկում է խորհրդի նախագահին՝ ստորագրության համար, և այն ստորագրված վիճակում ստանալով՝ տրամադրում է Ընկերության գործադիր տնօրենին (տնօրինությանը)՝ որոշման պահանջների կատարումն ապահովելու համար:
9.25 Խորհրդի հեռակա նիստերի ժամանակ չեն կարող լուծվել այն հարցերը, որոնց լուծումը այդպիսի նիստում արգելված է օրենքով:
9.26 Ընկերության խորհրդի նիստերն իրավասու են (քվորում ունեն), եթե նիստին մասնակցում են խորհրդի անդամների առնվազն կեսը: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:
9.27 Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում:
9.28 Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է:
9.29 Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Ընկերության գործադիր տնօրենի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ Ընկերության գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Ընկերության գործադիր տնօրենը մասնակցում է խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:
9.30 Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են՝
ա) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
բ) նիստին մասնակցած անձինք.
գ) նիստի օրակարգը.
դ) քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած յուրաքանչյուր խորհրդի անդամի.
ե) քվեարկության դրված հարցերի վերաբերյալ խորհրդի անդամների և խորհրդի նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները.
զ) նիստում ընդունված որոշումները:
Խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:
Խորհրդի նիստերը վարում է խորհրդի նախագահը, որը ստորագրում է նիստի որոշումները: Խորհրդի նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

9.31 Օրենքով սահմանված կարգով կարող են ստեղծվել խորհրդին կից հանձնաժողովներ:

10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ

10.1 Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության տնօրինությունը: Գործադիր տնօրենը կարող է ունենալ տեղակալներ: Ընկերության տնօրենը և տնօրինության անդամները նշանակվում են խորհրդի կողմից, իսկ գործադիր տնօրենի տեղակալները՝ խորհրդի կողմից՝ գործադիր տնօրենի ներկայացմամբ:
10.2 Տնօրինության կազմը ձևավորվում է խորհրդի որոշմամբ, ընդ որում, տնօրինության կազմում պարտադիր ընդգրկվում են գործադիր տնօրենը, գործադիր տնօրենի տեղակալը (առկայության դեպքում), գլխավոր հաշվապահը:
10.3 Տնօրինությունը՝ ելնելով իր առջև դրված նպատակների ու խնդիրների կատարման անհրաժեշտությունից,

1) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը,
2) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,
3) Հաստատում է Ընկերության տարեկան ներդրումային ծրագիրը,
4) լուծում է աշխատանքային ներքին կանոնակարգերով իրեն վերապահված հարցերը,
5) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության կողմից առաջարկվող ապահովագրության պայմանները (կանոնները),
6) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում ապահովագրական գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերը,
7) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության գործարար ծրագիրը, տարեկան վերաապահովագրության ծրագիրը և ծախսերի նախահաշիվը,
8) Կոորդինացնում է Ընկերության տարեկան ծախսերի նախահաշիվների մշակման աշխատանքները,
9) Կոորդինացնում է Ընկերության տարեկան, եռամսյակային ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվությունների մշակման աշխատանքները,
10) Կոորդինացնում է Ընկերության խորհրդի կողմից հաստատման ենթակա ներքին իրավական ակտերի նախագծերի, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի մշակման աշխատանքները,
11) Նախապատրաստում է Ընկերության կորպորատիվ քաղաքականությունների վերաբերյալ առաջարկությունները,
12) Իրականացնում է Ընկերության աշխատակիցների գնահատման և խրախուսման համակարգերի մշակումը և ներդրումը, աշխատակիցների սերնդափոխության պլանավորումը,
13) Հետևում է Ընկերության կորպորատիվ մշակույթի զարգացումներին և կորպորատիվ արժեքների կառավարման, պահպանման ու փոխանցման գործընթացներին,
14) Վերահսկում է Ընկերությունում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված անհամապատասխանությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացումը,

15) իր իրավասության սահմաններում կազմավորում է մշտապես գործող աշխատանքային, խորհրդակցական և այլ տիպի մարմիններ,

16) Ընկերության ներքին իրավական ակտերին համապատասխան քննարկում է ապահովագրական գործունեության ծավալման հետ կապված խնդիրները,

17) հաստատում է Ընկերության ընթացիկ գործունեությունը կանոնակարգող կարգերի, կանոնակարգերի, հրահանգների, ընթացակարգերի, մեթոդական ցուցումների և այլ աշխատանքային փաստաթղթերը՝ բացառությամբ այն փաստաթղթերի, որոնք, համաձայն իրավական ակտերի և Կանոնադրության, ենթակա են հաստատման Ընկերության Խորհրդի կողմից,

18) ապահովում է Ընդհանուր ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը,

19) Ընկերության կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված կարգով կառավարում է Ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները,

20) կանոնակարգում և վերահսկում է Ընկերության բոլոր վարչությունների ընթացիկ աշխատանքների կազմակերպման գործընթացը,

21) իրականացում է մարդկային ռեսուրսների կառավարման գործառույթներ,

22) իր իրավասությունների սահմաններում ընդունում է որոշումներ,

23) Ընկերության աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

24) վերահսկում և հետևում է Ընկերության աշխատողների Կանոնակարգով նախատեսված պարտականությունների պատշաճ կատարման գործընթացը,

25) Ընկերության մասնակիցների ժողովին և Խորհրդին ներկայացնում է պահանջվող կամ սահմանված կարգի հաշվետվություններ,

26) ապահովում է Ընկերության նյութական արժեքների և ֆինանսական միջոցների պահպանումը,

27) ապահովում է Ընկերության հաշվապահական հաշվառման կազմակերպման աշխատանքները,

28) ապահովում է ապահովագրական պահուստների, ապահովագրական ընկերությունների համար սահմանված հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկման և համապատասխան հաշվետվությունների ներկայացման աշխատանքների իրականացումը,

29) աշխատողների աշխատանքի կազմակերպման համար ստեղծում է բավարար նախապայմաններ,

30) լուծում է օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոնադրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով նախատեսված այլ հարցեր:

10.4 Ընկերության գործադիր տնօրենը.

1) գործարքներ է կնքում Ընկերության անունից,

2) ներկայացնում է Ընկերությունը հայրենական և արտասահմանյան ընկերություններում կազմակերպություններում և հիմնարկություններում,

3) գործում է առանց լիազորագրի,

4) տալիս է լիազորագրեր,

5) սահմանված կարգով ընդունում և ազատում է աշխատանքից Ընկերության աշխատողներին,

6) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային,

7) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ, դրանց հետ կապված կնքում է պայմանագրեր և կատարում գործարքներ,

8) ստորագրում է ելից փաստաթղթերը, ինչպես նաև վճարման փաստաթղթերը,

9) իրեն վերապահված իրավասությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է դրանց կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

10) հաստատում է միջազգային կապեր տաբեր նմանատիպ Ընկերությունների հետ և անհրաժեշտության դեպքում ներկայացնում է Ընկերությունը միջազգային հանդիպումների ժամանակ,

11) կոորդինացնում է Ընկերության աշխատակիցների գնահատումը,

12) ներկայացնում է Ընկերությանը հաճախորդների, գործընկերների, ՀԼՄ-ների, պետական մարմինների, հասարակական կառույցների հետ փոխհարաբերություններում,

13) վերահսկում է Ընկերության կողմից բացահայտվող տեղեկատվության մշակման և հրապարակման գործընթացը,

14) մշտադիտարկում է Ընկերության ներքին իրավական ակտերի պահանջներին՝ Ընկերության գործարար պրակտիկայի համապատասպանությունը և անհրաժեշտության դեպքում ապահովում է դրանցում փոփոխությունների և լրացումների կատարումը,

15) հետևում է Ընկերության պաշտոնական գրագրություններին,

16) Խորհրդի կողմից նշանակման համար՝ Խորհրդին է ներկայացնում Գործադիր տնօրենի տեղակալի թեկնածուին:

10.5 Ընկերության տնօրինության անդամները փոխարինում են Ընկերության գործադիր տնօրենին վերջինիս բացակայության դեպքում և իրականացնում են օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ:

10.6 Գործադիր տնօրենը, որպես Տնօրինության նախագահ

1) կազմակերպում է Տնօրինության աշխատանքները.
2) գումարում և նախագահում է Տնօրինության նիստերը.
3) կազմակերպում է Տնօրինության նիստերի արձանագրությունների վարումը.
4) ներկայացնում է Տնօրինությունը Խորհրդի նիստերին.
5) ստորագրում է Տնօրինության նիստերի որոշումները.

10.7 Տնօրինությունն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:

10.8 Տնօրինության նիստերը հրավիրվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության: Տնօրինության նիստերին քննարկվող հարցերի նյութերը պատրաստվում են Ընկերության ստորաբաժանումներում:

10.9 Տնօրինության նիստերը գումարում է Գործադիր տնօրենը՝ իր, Խորհրդի, Տնօրինության անդամի, Ընկերության ներքին աուդիտի ղեկավարի, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի, Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի, Կենտրոնական բանկի խորհրդի պահանջով կամ առաջարկությամբ՝ Խորհրդի կողմից հաստատված տնօրինության գործունեության կանոնակարգի համաձայն:

10.10 Տնօրինության նիստերը կազմակերպում և վարում է Գործադիր տնօրենը:

10.11 Տնօրինության նիստն իրավասու է (քվորում ունի), եթե նիստին անձնական մասնակցության կամ հեռակա քվեարկության ձևով (հարցման միջոցով) մասնակցում են Տնօրինության անդամների կեսը:
10.12 Տնօրինության որոշումներն ընդունվում են նիստին ներկա Տնօրինության անդամների ձայների մեծամասնությամբ: Տնօրինության յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Քվեարկության ժամանակ Տնօրինության յուրաքանչյուր անդամ ունի ձայնի իրավունք: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ Տնօրինության այլ անդամի) չի թույլատրվում:
10.13 Օրակարգում ընդգրկված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ Տնօրինությունը որոշումը ընդունում է բաց քվեարկությամբ՝ «կողմ», «դեմ» և «ձեռնպահ» սկզբունքով: Ձայների հավասարության դեպքում Գործադիր տնօրենի ձայնը որոշիչ է:
10.14 Տնօրինության նիստերին կարող են հրավիրվել և խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել Ընկերության ներքին աուդիտի ղեկավարը, ռիսկերի կառավարման պատասխանատուն, ինչպես նաև Ընկերության ստորաբաժանումների ղեկավարները և այլ աշխատողներ:
10.15 Տնօրինության անդամներից որևէ մեկի ցանկությամբ, քվերակության ժամանակ, նիստին հրավիրված անձինք ներկա չեն գտնվում:
10.16 Տնօրինության նիստերն արձանագրվում են պատասխանատու քարտուղարի կողմից: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են՝

1) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
2) նիստին մասնակցած անձանց անունները.
3) նիստի օրակարգը.
4) քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած Տնօրինության յուրաքանչյուր անդամի.
5) քվեարկության դրված հարցերի վերաբերյալ Տնօրինության անդամների և Տնօրինության նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները.
6) նիստում ընդունված որոշումները:

10.17 Տնօրինության նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող Տնօրինության բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:
10.18 Տնօրինության նիստերի արձանագրությունները տրամադրվում են Տնօրինության անդամներին, Խորհրդին, ներքին աուդիտին, Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձին՝ նրա պահանջով:
10.19 Ընկերության գործադիր տնօրենը խորհրդին պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ, ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ խորհրդի սահմանած կարգով:

11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԸ

11.1 Ընկերության գլխավոր հաշվապահը կամ նման պարտականություններ իրականացնող անձը իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

11.2 Ընկերության գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների ու փաստաթղթերի ներկայացման հետ, պարտադիր է Ընկերության բոլոր աշխատակիցների համար:
11.3 Ընկերության գլխավոր հաշվապահը նշանակվում է Ընկերության խորհրդի կողմից՝ Ընկերության տնօրինության ներկայացմամբ: Ընկերության գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել ընդհանուր ժողովին, խորհրդին, գործադիր տնօրենին (տնօրինությանը), ներքին աուդիտի ստորաբաժանմանը կամ այլ անձին:
11.4 Ընկերության գլխավոր հաշվապահն առնվազն եռամսյակը մեկ անգամ Ընկերության խորհրդին և տնօրինությանն է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն՝ խորհրդի հաստատած ձևով և բովանդակությամբ:
11.5 Ընկերության գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Ընկերության բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ

12.1 Ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը (առկայության դեպքում նաև ներքին աուդիտի անդամները) նշանակվում է Ընկերության խորհրդի կողմից: Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Ընկերության կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև գործադիր մարմնի անդամների կամ գլխավոր հաշվապահի հետ փոխկապակցված անձինք:
12.2 Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները պարտավոր են պահպանել Ընկերության աշխատակիցների համար սահմանված աշխատանքային կարգապահությունը:
12.3 Ընկերության ներքին աուդիտը Ընկերության խորհրդի հաստատած կանոնակարգի համաձայն՝
ա) հսկողություն է իրականացնում Ընկերության ընթացիկ գործունեության և ռիսկերի նկատմամբ.
բ) հսկողություն է իրականացնում Ընկերության գործադիր տնօրենի (տնօրինության), գլխավոր հաշվապահի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների, պատասխանատու ակտուարի կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և Ընկերության ներքին ակտերի, գործադիր տնօրենին (տնօրինությանը) կամ գլխավոր հաշվապահին տրված հանձնարարականների կատարման նկատմամբ.
գ) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Ընկերության խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ:
դ) Ներքին աուդիտն իրականացում է նաև ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ: Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող

հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:
12.4 Ընկերության ներքին աուդիտի ղեկավարը խորհրդին և տնօրինությանն է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝
ա) հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին.
բ) արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում, եթե խախտումները հետևանք են գործադիր տնօրենի կամ խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես խորհրդի նախագահին:
12.5 Ներքին աուդիտի ղեկավարի հաշվետվությունը պետք է առնվազն պարունակի հետևյալ տեղեկությունները՝
ա) աուդիտորական դիտարկման նկարագրությունը.
բ) դիտարկման արդյունքում բացահայտված խախտումներն ու թերությունները և դրանց վերացման վերաբերյալ առաջարկված միջոցառումները.
գ) հայտնաբերված խախտումների և թերությունների վերացման մասին ներքին աուդիտի եզրակացությունը:
12.6 Հաշվետվությունները ներկայացվում են խախտումը հայտնաբերելուց առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում:
12.7 Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք ներկայացնել խորհրդին, իսկ պատճենը՝ Կենտրոնական բանկին:
12.8 Եթե ներքին աուդիտի կողմից Ընկերության խորհրդին ներկայացվող հաշվետվությունները բացահայտում են օրենքների, այլ նորմատիվ իրավական և Ընկերության ներքին իրավական ակտերի խախտումներ, ապա խորհուրդը պարտավոր է ձեռնարկել միջոցներ այդ խախտումների վերացման և հետագայում չկրկնման ուղղությամբ.

13. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

13.1 Ընկերությունն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով Հայաստանի Հանրապետությունում և նրա տարածքից դուրս ստեղծել առանձնացված տարածքային ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր, ներկայացուցչություններ:
13.2 Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների հիմնադրման և նրանց գործունեության դադարեցման մասին որոշումները կայացնում է Ընկերության խորհուրդը:
13.3 Ընկերության մասնաճյուղերը և ներկայացուցչությունները համարվում են հիմնադրված և իրավունք ունեն իրականացնել իրենց վերապահված գործառնությունները, միայն օրենքով սահմանված կարգով գրանցվելու պահից:
13.4 Ընկերության մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները գործում են Ընկերության խորհրդի կողմից հաստատած կանոնադրությունների հիման վրա:
13.5 Մասնաճյուղի գործունեության ընթացիկ ղեկավարումն իրականացնում է մասնաճյուղի ղեկավարը, որն ապահովում է մասնաճյուղում Ընկերության կառավարման մարմինների որոշումների, հանձնարարականների և այլ ներքին իրավական ակտերի

կատարումը, իրականացնում սույն կանոնադրությամբ, Ընկերության կառավարման մարմինների սահմանած իրավական ակտերի շրջանակներում նախատեսված մասնաճյուղի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ: Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծման և գործունեության դադարեցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

14. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

14.1 Ընկերությունն ունի մշտապես գործող ինտերնետային կայք, որտեղ հրապարակում է ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով պահանջվող տեղեկությունները:
14.2 ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում Ընկերությունը այդ ակտերով նախատեսված տեղեկությունները հրապարակում է նաև այլ միջոցներով:
14.3 Ընկերությունը բացի ՀՀ օրենսդրությամբ պարտադիր հրապարակման ենթակա տեղեկություններից կարող է հրապարակել նաև այլ տեղեկություններ, որոնք ՀՀ օրենսդրության համաձայն՝ չեն պարունակում պահպանման ենթակա գաղտնիք կամ ծառայողական տեղեկատվություն:

15. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏԸ

15.1 Յուրաքանչյուր տարի Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը ներգրավում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձի՝ նրա հետ կնքելով համապատասխան պայմանագիր:
15.2 Ընկերության արտաքին աուդիտին հաստատում է Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովը:
15.3 Յուրաքանչյուր տարի, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ այլ իրավական ակտերով, Ընկերությունում արտաքին աուդիտի ընտրությունը կարող է կատարվել հետևյալ երկու եղանակներով՝
ա) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում Ընկերության խորհրդի կողմից ներկայացրած կազմակերպությանը (անձին) ուղղակի հաստատելու միջոցով,
բ) Արտաքին աուդիտի ընտրության վերաբերյալ մրցույթի կազմակերպման և անցկացման միջոցով: Մրցույթի կարգը սահմանվում է Խորհրդի կողմից հաստատված Ընկերության արտաքին աուդիտի ընտրության համապատասխան կանոնակարգով: Մրցույթի արդյունքում Ընկերության արտաքին աուդիտի ընտրության համապատասխան կանոնակարգի համաձայն հաղթող ճանաչվող անձին Ընկերության Խորհուրդը ներկայացնում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանը: Ընկերության արտաքին աուդիտը պետք է համապատասխանի «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված չափանիշներին:

16. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

16.1 Ընկերությունը կարող է լուծարվել օրենքով նախատեսված հիմքերով և կարգով:
16.2 Ընկերության ինքնալուծարումն իրականացվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ համաձայն ՀՀ օրենսդրության:
16.3 Ընկերության ինքնալուծարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Լուծարային հանձնաժողովը նշանակվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ առնվազն երեք անդամի կազմով:
16.4 Պարտատերերի հանդեպ ունեցած պարտավորությունների մարումից հետո մնացած լուծարային միջոցները բաշխվում են բաժնետերերի միջև՝ նրանց բաժնեմասին համամասնորեն:

17. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

17.1 Սույն կանոնադրությունն ուժի մեջ է մտնում ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցման պահից, բացառությամբ սույն կանոնադրության 1-ին գլխի 1.5 կետի, որն ուժի մեջ է մտնում 2020 թվականի օգոստոսի 1-ին և 9-րդ գլխի 9.2 կետի, որն ուժի մեջ է մտնում 2020 թվականի սեպտեմբերի 1-ին: Մինչև սույն կանոնադրության ուժի մեջ մտնելը գործում է Ընկերության նախորդ խմբագրության կանոնադրությունը: